ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

04.10.2022 թ.

ԱԲՀ-ն նպատակ ունենալով շարունակաբար բարելավել կրթության որակն ու իր կողմից մատուցվող կրթական ծառայությունները և, կարևորելով իր շրջանավարտների կարծիքն այդ գործընթացում, յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին շրջանավարտների շրջանում անցկացնում է հարցումներ՝ բացահայտելու և գնահատելու նրանց բավարարվածությունը ստացած կրթությունից:

2021-2022 ուստարվա ԱԲՀ-ի «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի 5-րդ և «Բուժական» ֆակուլտետի 6-րդ կուրսերի շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության հարցումներն անցկացվել են առցանց՝ Google Forms ծրագրով: Հարցումը կազմակերպվել է ավարտական ամփոփիչ քննություններից անմիջապես հետո՝ հուլիս ամսին: Հարցաշարը լրացվել է անանունության սկզբունքով:

Հարցմանը մասնակցել են 2021-2022 ուստարվա 33 շրջանավարտներից 21-ը /64 %/:

Ստորև ներկայացնենք հարցադրումներն իրենց արդյունքներով.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նշեք Ձեր սեռը



ԱԲՀ 2021-2022 ուստարվա շրջանավարտների թվում մեծամասնություն էին կազմում արական սեռի ներկայացուցիչները, նույն առավելությունն էլ առկա է հարցման մասնակիցների թվում:

1.2. Նշեք Ձեր տարիքը.



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, Ավանդական բժշկության համալսարանը թողարկել է տարբեր տարիքային խմբերի շրջանավարտներ:

Շրջանավարտների ազգային պատկանելությունը նույնպես բազմազան է (Իրաք, Իրան, Հնդկաստան, Հորդանան):

1.3. Նշեք՝ ո՞ր ֆակուլտետում եք սովորել.



2021-2022 ուստարում, ինչպես նախորդ տարիներին, մեծ է «Բուժական գործ» ֆակուլտետի շրջանավարտների թիվը, այդպես է նաև հարցվածների շրջանում:

1.4. Նշեք Ձեր մասնագիտությունը և որակավորումն ըստ դիպլոմի.



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ

1.2. Ձեզ համար պա՞րզ էին ու հասկանալի կրթական ծրագրի նպատակն ու վերջնարդյունքները (այսինքն, այն ինչ պետք է իմանայիք, կարողանայիք անել ուսումնառության ավարտին).



Հարցված շրջանավարտների մեծամասնությանը պարզ էր մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքները, ինչը փաստում է ուսումնառողներին մատուցվող կրթական ծրագրի մասին իրազեկվածության ապահովման մասին:

2.2. Դասընթացների նպատակը և խնդիրները Ձեզ ներկայացվե՞լ են հստակ.



Ինչպես երևում է հարցվածների պատասխաններից, ուսանողները տեղյակ են եղել, թե մատուցվող դասընթացի շրջանակում ինչ են սովորելու:

2.3. Ձեզ համար պա՞րզ էր, թե ինչ էին ակնկալում ձեզանից դասախոսները.



Հարցվածներից միայն 6 %-ին պարզ չի եղել դասախոսի կողմից ներկայացվող պահանջները, իսկ մնացած 94 %-ը, ըստ երևույթին, գոհ է դասախոս-ուսանող համագործակցությունից:

2.4.Դասընթացի ծրագրում ներառված տեսական և գործնական պարապմունքների բաշխվածությունը բավարարե՞լ է առարկայի արդյունավետ յուրացմանը.



Այս հարցի վերաբերյալ հարցվածների պատասխանները շատ տարբեր են. հարցվածների 44 %-ին բավարարել է տեսական և գործնական դասերի հարաբերակցությունը առարկայի արդյունավետ յուրացման համար, 31 %-ին մասամբ է բավարարել, 19 %-ին չի բավարարել, իսկ 6 %-ը դժվարացել է պատասխանել:

2.5. Ուսումնառությունը Համալսարանում նպաստե՞լ է տեսական գիտելիքների ձեռքբերմանը.



Հարցված շրջանավարտների 56 %-ը գտնում է, որ ուսումնառությունը նպաստել է Համալսարանում տեսական գիտելիքների ձեռքբերմանը, նրանց 25 %-ը պատասխանել է, որ մասամբ է նպաստել, 13 %-ը դժգոհ է տեսական գիտելիքների ձեռքբերումից, իսկ հարցվածների 6 %-ը դժվարացել է պատասխանել:

2.6. Ուսումնառությունը Համալսարանում նպաստե՞լ է մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը.



Չնայած հարցվածների մեծամասնությունը վերոնշյալ հարցի վերաբերյալ դրական գնահատական է տվել, այնուամենայնիվ, հարկավոր է մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսումնառության արդյունքների, հատկապես՝ պրակտիկաների արդյունքների գնահատման գործընթացը:

2.7. Ստացե՞լ եք անհրաժեշտ աջակցություն Ձեր կրթական կարիքների վերհանման և բավարարման նպատակով.



Հարցված ուսանողների 75 %-ը հաստատել է, որ կրթական կարիքների վերհանման և բավարարման նպատակով ստացել է աջակցություն, 13 %-ը պատասխանել է, որ մասամբ է օգտվել այդ աջակցությունից, 6%-ը դժվարացել է պատասխանել է և նույնքանն էլ պատասխանել է՝ ոչ:

2.8. Ուսումնառությունը ԱԲՀ-ում նպաստե՞լ է Ձեր կլինիկական մտածելակերպի ձևավորմանը.



Հարցվածների 62 %-ը գտնում է, որ ուսումնառությունն ԱԲՀ-ում նպաստել է իրենց կլինիկական մտածելակերպի ձևավորմանը, 19 %-ը կարծում է, որ մասամբ է այն նպաստել, 13 %-ի կարծիքով այն չի նպաստել, իսկ 6 %-ը դժվարացել է պատասխանել:

2.9. Ուսումնառությունը Համալսարանում զարգացրե՞լ է Ձեր հաղորդակցական և կազմակերպչական կարողությունները.



Պարզելու համար, թե արդյոք Համալսարանը զարգացրել է իր շրջանավարտների հաղորդակցական և կազմակերպչական կարողությունները, ստացել ենք հետևյալ պատասխանները՝ 56 %-ի կարծիքով՝ «Այո» զարգացրել է, 19 %-ի կարծիքով՝ «Մասամբ» է զարգացրել այդ կարողությունները, իսկ 25 %-ի կարծիքով՝ չի զարգացրել:

2.10. Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը.



Պրակտիկան՝ որպես ցանկացած մասնագիտական ուսումնական հաստատության կրթական ծրագրերի պարտադիր և կարևոր բաղադրիչ, ըստ ուսումնական պլանների կազմակերպվում է 2-րդ կուրսից սկսած, որին հատկացվում է ընդամենը 15 կրեդիտ «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրով ուսումնառողների համար և 18 կրեդիտ՝ «Բուժական գործ» մասնագիտության համար: Պրակտիկայի օգտակարությունը հարցված շրջանավարտների 56 %-ը գնահատել է գերազանց, 19 %-ը՝ լավ, բավարար՝ 13 %-ը, անբավարար՝ 12 %-ը: Հարցվածներից ոչ բոլորն են այս հարցին պատասխանել (10 %): Նշենք, որ այս հարցի

վերաբերյալ ուսանողների գոհունակությունը նախորդ տարվա համեմատ ավելի բարձր է եղել:

2.11. Ձեզ հետաքրքի՞ր էին մասնագիտության կրթական ծրագրի «Ավանդական բժշկություն» կրթամասում ներառված առարկաները («Ֆիտոթերապիա», «Ասեղ-այրում թերապիա»,...).



Այս հարցի պատասխաններից երևում է, որ հարցված շրջանավարտների ¼-ն է հետաքրքրված եղել այդ դասընթացներով: Այսինքն, հարցվածների շրջանում ավելի շատ են առարկայով չհետաքրքրվողները՝ 31 %, քան հետաքրքրվողները:

2.13. Ուսումնառության ընթացքում օբյեկտի՞վ են գնահատվել ուսանողների գիտելիքները.



Ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը փաստել են հարցվածների 50 %-ը: 31 %-ի կարծիքով գիտելիքի գնահատումը մասամբ է եղել օբյեկտիվ: Հարցվածների 19 %-ի կողմից ունենք նաև բացասական պատասխան: Կա նշված խնդրին համակողմանի անդրադառնալու անհրաժեշտություն:

2.14. Գիտելիքների ստուգման և գնահատման տարբեր ձևերը (գրավոր, բանավոր, առաջադրանքները, ընթացիկ ստուգումները) նպաստե՞լ են դասընթացի ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը.



Գիտելիքի ստուգման և գնահատման կիրառվող ձևերի վերաբերյալ հարցվածների մեծամասնությունը դրական է պատասխանել, այսինքն, դասախոսների կողմից ընտրված գնահատման մեթոդները նպաստել են դասընթացից ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը:

2.15. Ինչպես կգնահատեք ընդհանուր առմամբ գիտելիքների գնահատման համակարգը.



Ընդհանուր առմամբ գիտելիքի գնահատման համակարգի գնահատումը գոհացուցիչ է, ունենք ընդամենը 1 ուսանողի կողմից բացասական գնահատական:

2.16. Ինչպե՞ս եք գնահատում ամփոփիչ ատեստավորման գնահատականի անաչառությունը.



Ամփոփիչ ատեստավորման գնահատականի անաչառության առնչությամբ ունենք հարցվածների 81 %-ի գերազանց և լավ գնահատականները, ինչը շատ ուրախալի է:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԲՀ -Ի ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ

3.1. Ինչպե՞ս եք գնահատում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան (լսարաններ, լաբորատորիաներ, մասնագիտական սենյակներ, նախակլինիկական սենյակ, գրադարան, ուսումնառության այլ ռեսուրսներ).



Ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան անբավարար է գնահատվել հարցվածների 19 տոկոսի կողմից: Ընդհանուր առմամբ ուսանողներին գոհացրել է կրթական ծրագրի իրականացման համար առկա նյութատեխնիկական բազան:

3.2. Ի՞նչը կոնկրետ ձեզ չի բավարարել ուսումնական գործընթացում՝ կապված նյութատեխնիկական բազայի հետ բաց հարցին փոքր թվով ուսանողներ են պատասխանել.

Լաբորատորիաները՝ 3 ուսանող,

Գրադարանում անգլերենով բժշկական ոլորտի գրքերը՝ 1 ուսանող,

Պրակտիկան բավարար չէր, իսկ որոշ առարկաների գիտելիքները բավարար չէին՝ 1 ուսանող,

Վիրաբուժական հիվանդություններ և ներքին հիվանդություններ՝ 1 ուսանող:

3.3. Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի որակավորման մակարդակը.



3.4. Ի՞նչը կոնկրետ Ձեզ չի բավարարել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքում բաց հարցին պատասխանել են հարցմանը մասնակցած ուսանողներից մի քանիսը և նշել են, որ ոչ մի խնդիր չեն ունեցել ուսումնառության ընթացքում:

3.5. Գո՞հ եք արդյոք.



Շրջանավարտների 90 %-ը գոհ է թե՛ղեկավարությունից, թե՛ դասախոսական կազմից: Ուսանողական կառույցներից գոհ են փոքր թվով ուսանողներ, ինչն էլ համալսարանում առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանա:

3.6. Արդյոք ուսումնառության ընթացքում հանդիպե՞լ եք ակադեմիական անազնվության դեպքերի.



Հարցված շրջանավարտների մեծամասնությունը նշել է, որ ակադեմիական անազնվության դրսևորումների չի հանդիպել, 13 %-ը դժվարացել է պատասխանել, սակայն ունենք հարցման մասնակիցներ, որոնք հանդիպել են ակադեմիական ազնվության դեպքերի: Վերջինս պարզաբանման, քննարկման կարիք ունի:

3.7. Արդյո՞ք հստակ և թափանցիկ են ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերը և մեխանիզմները.



Ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերի և մեխանիզմների վերաբերյալ ուսանողները մշտապես տեղեկացվում են, և այս հարցի հետ կապված խնդիրներ կարծես թե չկան:

3.8. Կարևորո՞ւմ եք համալսարանում սովորելիս հանրակացարանի առկայության խնդիրը.



Հարցված շրջանավարտների մեծամասնությունը կարևորում է հանրակացարանի առկայության հարցը, ինչն արդեն ընթացքի մեջ է:

4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4.1. Արդյոք հասանելի՞ էր Ձեզ ԱԲՀ ընդունվելու և սովորելու վերաբերյալ տեղեկատվությունը.



ԱԲՀ-ն կարողացել է ապահովել իր շրջանավարտներին՝ նախկին դիմորդներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, ինչը շարունակում է նաև այժմ՝ ընդգրկելով ուսանողների հավաքագրման բոլոր հնարավոր տարբերակները:

5. <u>ԱԲՀ-ՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ</u>

5.1. Որքանո՞վ եք բավարարված ԱԲՀ-ից ստացած կրթությունից.



Այս հարցին, թե որքանո՞վ եք բավարարված ԱԲՀ-ից ստացած կրթությունից, հարցվածների 13 %-ը պատասխանել է ավելի, քան բավարարված եմ, 60 %-ը՝ ամբողջությամբ բավարարված եմ, 13 %-ը դժվարացել է պատասխանել, իսկ 7 %-ը ընտրել է պատասխանի բավարարված չեմ և նույնքանն էլ՝ ավելի, քան բավարարված չեմ տարբերակը:

ԱԲՀ-ն ելնելով իր առաքելությունից և ռազմավարական նպատակներից՝ մշտապես կատարելագործում է կրթական գործընթացները՝ խթանելով դիմորդների հոսքը և մրցակցությունը բուհերի շրջանակում:

5.2. Խորհուրդ կտա՞ք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԱԲՀ.



Ուրախալի է, որ շրջանավարտների 73 %-ը պատրաստ է խորհուրդ տալ իր մերձավորներին և ընկերներին ընդունվելու ԱԲՀ, ինչը ավելի բարձր ցուցանիշ է, քան նախորդ տարվա հարցման ժամանակ տրված պատասխանը /65%/:

5.3. Նշեք ԱԲՀ-ում ստացած կրթության ուժեղ կողմերը.

- ստոմատոլոգներին դասավանդող դասախոսներ Ա.Զեյնալյանը և Ա.Գևորգյանը,
- ամեն ինչ ուժեղ էր,
- ԱԲՀ-ն հավատարմագրված համալսարան է,
- ՊԴ կազմի բարձր պատասխանատվությունը,
- անատոմայի դասախոս դոկտոր Արսենը, գինեկոլոգիայի դասախոս դոկտոր Տաթևիկը:

5.4. Նշեք ԱԲՀ-ում ստացած կրթության թույլ կողմերը.

- գործնական դասերը,
- սեփական հանրակացարանի բացակայությունը,
- ոչինչ թույլ չէր:

6. Եթե հնարավորություն ունենայիք, ապա ի՞նչը կփոխեիք բուհում.



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտների կողմից իրականացվող անկախ գնահատումները թույլ են տալիս առանձնացնել ուսումնառության ուժեղ և թույլ կողմերը տարբեր տեսանկյուններից և ժամանակին արձագանքել մի շարք ուսումնական հիմնախնդիրներին, որոնք առաջանում են կրթական գործընթացների շրջանակներում և բարձրացնել ուսումնական գործընթացի որակը:

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են համալսարանում ստացած կրթությունից: Հարցվողների մեծամասնությունը (73%-ը) ընդհանուր առմամբ ԱԲՀ-ում ստացած կրթությունից ամբողջությամբ ***բավարարված է և ավելի, քան բավարարված է,*** նրանք պատրաստ են մերձավորներին և ընկերներին խորհուրդ տալ ընդունվելու ԱԲՀ:

Շրջանավարտները ստացել են բավարար մասնագիտական գիտելիքներ և կարողություններ, սակայն նրանց կողմից նշվել են տարբեր խնդիրներ, որոնց լուծման համար **առաջարկվում է՝**

1. Գնահատել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը, դարձնել այն առավելագույնս օբյեկտիվ գնահատման գործիք:
2. Բարձրացնել ՈւԳԸ, ՈւԽ կառույցներից ուսանողների բավարարվածության մակարդակը:
3. Վերազինել լաբորատոր սենյակները նյութատեխնիկական միջոցներով՝ հաշվի առնելով ամբիոններին տրամադրվող միջոցների առաջնահերթությունը: Դա կնպաստի գործնական պարապմունքներն առավել հետաքրքիր և ինտերկտիվ անցկացնելուն և առավել մեծ թվով ուսանողներ դասին ներգրավելուն:
4. Ստեղծել սովորողների համար ժամանցի և հանգստի համար ավելի հարմարավետ պայմաններ:
5. Ակտիվացնել ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավվելու աշխատանքները, որը կօգնի ապագա բժշկին հանդես գալ կոնֆերանսներում, ներկայացնել աշխատանքի ընթացքում կուտակած փորձը:
6. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին կազմակերպել ուսանողական կոնֆերանս, և դասախոսի գնահատմամբ ուսանողների արժանի աշխատանքները ներկայացնել, ստեղծել ժողովածու:
7. Շարունակել գրադարանում անգլերենով մասնագիտական գրականության համալրումը՝ ապահովելով յուրաքանչյուր մասնագիտական առարկայից գրքերի առկայությունը: